



Վայրի պտղատու ծառեր և թփուտներ

Վայրի պտղատու ծառեր և թփուտներ





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ Բովանդակություն

ՆԵՐՍԾՈՒԹՅՈՒՆ	3
Ծիրանենի	5
- Վայրի ծիրանենի	5
Խնձորենի	9
- Վայրի Խնձորենի.....	10
Ազնվամորի.....	13
- Վայրի ազնվամորի.....	14



Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 29.8 հզ կմ² տարածք, սակայն փոքր տարածք զբաղեցնելով հադերձ աչքի է ընկնում բնական պայմանների խիստ բազմազանությամբ: ՀՀ տարածքի ավելի քան 80%-ը լեռնային է, ինչն էլ դարձնում է Հայաստանը տիպիկ լեռնային երկիր, որտեղ լանդշաֆտները և էկոհամակարգերը կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնք նպաստում են հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանի ֆլորայի և ֆաունայի հիմնական կենսատիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ ու տարածքի տոպոգրաֆիական բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է իր տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով, հետևաբար, և իր մասնագիտացված դերով: Հայաստանում ձևավորված 10 լանդշաֆտակլիմայական գոտիներին բնորոշ պայմանները նպաստել են բուսական ու կենդանական տեսակների բնակության միջավայրերի մեծ բազմազանության առաջացմանը, որի արդյունքում առկա են՝ ինքնատիպ համակեցություններ, էնդեմիզմի բարձր մակարդակ և հարուստ ագրոկենսաբազմազանություն: Կենսաբազմազանության տեսակային կազմի առատությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ Հայաստանը գտնվում է տարածաշրջանի բուսական և



կենդանական աշխարհների ձևավորման կարևոր մարզերի հանգուցակետում, ինչպես նաև հանդիսանում է միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ: Արդյունքում՝ երկրի ոչ մեծ տարածքում (մոտ 30 հազ.կմ²) աճում են շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսեր, 428՝ հողային և ջրային ջրիմուռներ, 399՝ մամուռներ, 4207՝ սնկեր, 464՝





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ

քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակի անողնաշար կենդանիներ: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000 կմ² տարածքում աճում է մոտ 107 տեսակ:

Այսպիսով, չնայած իր համեմատաբար փոքր տարածքին, Հայաստանի Հանրապետությունը, աչքի է ընկնում բուսական համակեցությունների ու բուսատեսակների արտահայտված բազմազանությամբ, որը տարածքի բարդ ֆիզիկաաշխարհագրական պայմանների և ֆլորոգենետիկական տեսակետից նպաստավոր աշխարհագրական դիրքի արդյունք է, ինչպես վերևում արդեն նշվեց, 1կմ² վրա հաշվում են ավելի քան 100 տեսակ, որն աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է: ՀՀ-ի դենդրոֆլորան բաժանվում է հետևյալ խմբերի՝ գլխավոր կամ անտառկազմող, երկրորդական կամ ստորադաս, «լուսավոր» անտառների չորասեր և հազվագյուտ տեսակներ, արժեքավոր և վայրի պտղատու ծառեր ու թփուտներ: Հարուստ է նաև Հայաստանի վայրի պտղատու բուսածածկույթը: Այսպիսով կարող ենք վստահ պնդել, որ Հայաստանը պտղաբուծության հնագույն օջախներից է, որը համարվում է գյուղատնտեսության առաջատար և բարձր արդյունավետ ճյուղերից մեկը:





Ծիրանենի


Ծիրանենին վարդագգիների ընտանիքի ուժեղ աճ ունեցող պտղատու ծառատեսակ է: Հայրենիքը՝ Հայաստանն է, սակայն որպես ծիրանենու մշակության հնագույն օջախներ հայտնի են նաև Չինաստանն ու Միջին Ասիան: Ինչպես նաև, հայտնի են ծիրանենու 8 վայրի տեսակներ: Ծիրանենին միատուն բույս է, բարձրությունը 6-12մ է: Տերևները խոշոր են, կլորավուն կամ լայն էլիպսաձև, ծաղիկները՝ հիմնականում բաց վարդագույն են, երկսեռ, փոշոտումը խաչաձև: Պտուղը մսոտ, հյութալի կորիզապտուղ է՝ տարբեր ձևերի և մեծության, զանգվածը՝ 20–120 գ:

Ծիրանենին սկսում է բերք տալ 4-5 տարեկան հասակում, իսկ լրիվ բերքատվության հասնում է 10-րդ տարուց: Մեկ ծառը կարող է տալ 100-700կգ բերք: Պտուղների հասունացումը սկսվում է հունիսի 20-ից: Ծիրանենին երկարակյաց ծառ է, հանդիպում են ավելի քան 100 տարեկան բերքատու ծիրանենիներ: Պտուղներն օգտագործում են թարմ, պահածոյացված և չրի տեսքով: Մանրի մեջ օգտագործվում է նաև կորիզը, որն իր համով չի զիջում նշին:



- Վայրի ծիրանենի

Հիմնականում հետաքրքրվում են որն է ծիրանենու և վայրի ծիրանենու միջև տարբերությունները, և արդյոք գոյություն ունի նման ծառատեսակ, թե՛ ոչ: Այսպիսով՝ վայրի ծիրանենին իրոք գոյություն ունի և դա կարելի է համարել



Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ

բացառապես այլ ծառ: Վայրի ծիրանենին, մանրապտուղ վայրի

ծառատեսակ է, որն էլ բազմանում է սերմնացուով: Այն, հեշտորեն հարմարվում է հողին, ցրտադիմացկուն է, հանդուրժում է երաշտն ու այլ տարերային արհավիրքներ, սակայն ծաղկման շրջանում սառնամանիք չի սիրում: Վայրի ծիրանենու պտուղները համեմատաբար շատ ավելի մանր են, երբեմն նույնիսկ շատ փոքր, գույնը խիտ է և հագեցած, ասես իր մեջ ներառում է արևի դեղին երանգները: Մշակովի

տեսակների պտուղը կշռում է 150-160գր., իսկ վայրի ծիրանը միջինում լինում մոտավորապես 10գր-ի սահմաններում, շատ հազվադեպ ամենամեծ տեսակները կառող են կշռել մինչև 35գր.: Վայրի ծիրանենու բերքատվությունն ակնհայտորեն բարձր է, ծառը կարող է բառացիորեն ծածկված լինել պտուղներով: Սակայն այն իր համով զիջում է մշակովի ծառատեսակներին: Ծառի բարձրությունը կարող է հասնել մինչև տասը մետրի, այն ունի հզոր և լավ զարգացած արմատային համակարգ: Կորիզներն հիմնականում օգտագործվում են որպես ապագա ծիրանենու սերմեր, արդյունքում ստացվում են խոշոր, առողջ, ինտենսիվ աճող ծառեր:

- Վայրի և մշակովի ծիրանենիների տարբերությունները -

Արտաքնապես կարելի է ասել, որ գրեթե տարբերություն չկա, սակայն, այնուամենայնիվ, կան տարբերություններ և բավականին շատ:

- ✓ Վայրի ծիրանենու արմատային համակարգն ավելի հզոր է և զարգացած, ավելի հեշտ ու արագ է





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ հարմարվում ջերմաստիճանի և երաշտի տատանումներին:



✓ Վայրի ծիրանենին
հեշտությամբ ծաղկում է կորիզից, իսկ այ,
մշակովի սորտը աճում է միայն տնկիներով:

✓ Վայրի պտղի համը
դառնավուն է, դրանք փոքր են, ոչ այնքան
հյութալի:

✓ Վայրի ծառատեսակը
ցրտադիմացկուն է, և հիվանդությունների

նկատմամբ ևս կայուն է:

- Վայրի և մշակովի ծիրանենիների նմանությունները -

Չնայած վերոնշյալ տարբերություններին, վայրի և մշակովի ծիրանենիներն ունեն
նաև մի շարք նմանություններ:

- ✓ Ե՛վ վայրի, և՛ մշակովի ծիրանենիները չեն սիրում գարնան սկզբին
սառնամանիքների վերադարձը: Բողբոջներն ու նոր բացվող ծաղիկները
մահանում են երբ փոքր ինչ բացասական ջերմաստիճան է լինում, որն էլ վատ
է ազդում բերքատվության վրա:
- ✓ Չեն հանդուրժում կավային, ծանր
հողերը, նաև չեն սիրում խոնավություն:

- Օգտակար հատկությունները -

Շնորհիվ վիտամինների և
միկրոէլեմենտների առկայության, վայրի
ծիրանենին շատ օգտակար
հատկություններ ունի, օրինակ այն օգնում է կարգավորել ջերմությունը, ուստի
խորհուրդ է տրվում այն ներառել սննդի մեջ ամռանը: Այս մրգի բաղադրությունը
ներառում է նաև կարոտին, որն օգնում է մաշկը պաշտպանել





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ

ուլտրամանուշակագույն ճառագայթման բացասական հետևանքներից: Սա հաշվի առնելով, կարելի է պնդել որ պտղի փափկամիսը կարող է օգտագործվել որպես լոսյոն արևահարման դեպքում: Մրգի բաղադրության մեջ մանրաթելեր կան, ինչը դրականորեն ազդում է աղիքների աշխատանքի վրա: Վայրի ծիրանն օգնում է նորմալացնել վահանաձև գեղձի և քրտինագեղձերի գործունեությունը: Բացի այդ, պտուղներն օգնում են ակտիվացնել

օրգանիզմի

նյութափոխանակություն

ներ: Խորհուրդ է տրվում

միրգը ներառել

սննդակարգի մեջ

ավիտամինոզի,

անեմիայի և

հիպերտոնիայի

առկայության դեպքում:



Քանի որ միրգը պարունակում է մեծ քանակությամբ երկաթի և կալցիումի աղեր, պտուղներն օգտակար կլինեն հղիների և կրծքով կերակրող կանանց օգտագործման համար:





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ

Խնձորենի

Խնձորենին պատկանում է վարդագգիների ընտանիքի տերևաթափ ծառերի և թփերի ցեղին: Հայտնի է ավելի քան 30 (այլ տվյալներով՝ 150) տեսակ՝ տարածված Հյուսիսային կիսագնդի տաք գոտում: Առավել տարածված են սովորական, անտառային, արևելյան, ցածրաճ, սիբիրական և չինական տեսակները: Խնձորենու հայրենիքը համարում են Կովկասը և Միջին Ասիան:



Սակայն, հավանաբար, եղել են նաև ընտանեցման ուրիշ օջախներ, քանի որ երկրագնդի շատ շրջաններում աճում են վայրի խնձորենու բազմաթիվ տեսակներ, որոնցից ստացվել է ավելի քան 20 հազար սորտ: ՀՀ-ում տարածված է արևելյան կամ կովկասյան վայրի խնձորենին. աճում է բոլոր մարզերի անտառներում, այն նաև Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Ամենուր մշակվում է սովորական խնձորենին՝ բազմաթիվ տարբեր սորտերով:

Հնագույն ժամանակներից խնձորը համարվել է արժեքավոր բուժական սնունդ. պարունակում է մինչև 16% շաքար (գերակշռում է պտղաշաքարը), պեկտին, օրգանական թթուներ (խնձորաթթու, կիտրոնաթթու), C, B, E, PP, P, K վիտամիններ,

կարոտին (A-նախավիտամին), երկաթի, մանգանի, կալիումի, նատրիումի, կալցիումի և այլ աղեր, խնձորին անկրկնելի բույր տվող եթերայուղ է: Խնձորի մեջ պարունակվող պեկտինային նյութերն օժտված են թունավոր միացություններով, այդ թվում ծանր մետաղների (կապար, նիկել, կոբալտ) աղերն օրգանիզմից հեռացնելու հատկությամբ:





Վայրի Ծառեր և Թփուտներ Խնձորն

օգտագործվում է
թարմ և վերամշակված (չիր,
շաքարաչիր, կոմպոտ, ջեմ, պովիդոլ,
պաստեղ, դոնդող, հյութ, գինի, օղի,
քացախ և այլն): Հայտնի է «Սիդր»

խնձորի փրփրուն գինին, իսկ Արևմուտքի մի շարք երկրներում՝ «Կալվադոսը»
(խնձորի ավելի թունդ խմիչք): Խնձորենու կեղևը պարունակում է ներկանյութ: Այն
գեղազարդիչ է և մեղրատու:

- Վայրի Խնձորենի


Լայնատերև, փշատերև և այլ
անտառներում գլխավոր տեղերից
մեկը զբաղեցնում է հենց վայրի
խնձորենին:

Կախված

տարածաշրջանից, այս ծառը



կարելի է գտնել որպես միայնակ աճող ինչպես նաև շրջապատված իր՝ իսկ
«հարազատների» կողմից: Վայրի խնձորենին կարող է աճել
ինչպես ծառի տեսքով, այնպես էլ մի մեծ թփի նման: Ծառի
բարձրությունը կարող է հասնել 12-14 մետրի, իսկ բնի
հաստությունը մոտ 40 սանտիմետրի: Ոչ ամբողջովին
հասուն տարիքում 2-3 ծիլեր հաճախ կարող են սերտաճել
ծառի բնի հետ, և եթե դրանք չկտրեն, նրանք կաճեն որպես
լիարժեք ծառեր: Հենց սա է պատճառը, որ խնձորի ծառը
կարող է նմանվել մեծ թփուտի: Ծառի պսակը կլորավուն է,
փռված ու սաղարթախիտ, հիմնականում՝ այն գնդաձև տեսք
է ունենում: Կախված տարիքից, ճյուղերն ունեն տարբեր
երանգներ՝ մուգ շագանակագույնից մինչև մոխրագույն:





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ

Շատ հաճախ ճյուղերն ունենում են մանր փշեր: Ծառի տերևները

երկարավուն են և

օվալաձև: Ծառը սկսում է ծաղկել մայիս ամսին, ծաղիկները մեծ են՝ սպիտակ կամ վարդագույն, հինգ տերևներով: Բերքատվությունն էլ սկսվում է օգոստոսին: Հասած պտուղներն արդեն լինում են տարբեր գույներով, չափսերով, ձևերով: Սակայն հիմնականում վայրի խնձորենու պտուղները փոքր են՝ 3-5 սմ տրամագծով, թթվային և տոփալ համով:



Պտուղների գույնը հիմնականում կանաչադեղնավուն է, սակայն լինում են նաև կարմիր ինչպես նաև սպիտակադեղնավուն՝ վարդագույն երանգով: Գիտականորեն ապացուցված է, որ այս փոքրիկ խնձորները գերազանցում են այլ մշակովի սորտերին իրենց իսկ օգտակար հատկություններով: Դրա հիմնապատճառն էլ այն բոլոր օգտակար նյութերն են, որոնք ներառված են այս խնձորների բաղադրության մեջ:



- Օգտակար հատկությունները՝

Վայրի խնձորը երկար ժամանակ կարող է պահպանվել, այն չի փչանում և պահպանում է իր օգտակար հատկությունները: Շնորհիվ երկարատև պահպանման, այս պտուղը հասանելի է ողջ տարին: Խնձորի օգտագործումը հարստացնում է օրգանիզմը տարատեսակ վիտամիններով՝ A, C, PP, ինչպես նաև հանքանյութերով՝ երկաթ, կալիում, մագնեզիում, և պեկտիններով: Խնձորի կալորիականությունը ցածր է, և սա էլ մրգի





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ

օգտագործման առավելություններից մեկն է: Շնորհիվ իր օգտակար նյութերի պարունակության, խնձորը խրախուսվում է օգտագործել սակավարունության, հիպերտոնիայի, սրտանոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի դեպքում:



vitamins
+A+C+E

Ինչպես նաև խնձորի մեջ պարունակվող երկաթը նպաստում է կարմիր արյան բջիջների

հայտնվելուն, բացի այդ խնձորի պարբերաբար օգտագործումն օգնում է նվազեցնել արյան ճնշումը և ազատվել գլխացավերից: Այսպիսով, խնձորն օգտագործվում է նաև, որպես օրգանիզմի մաքրման միջոց՝ այն հանում է տոքսինները և նպաստում է երիկամների քարերի արտազատմանը:





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ Ազնվամորի

Ազնվամորին վարդագգիների ընտանիքին պատկանող 1-1,5 մ բարձրության թուփ է կամ կիսաթուփ: Կյանքի առաջին տարում ցողունները խոտային են, բարակ, ծածկված են սուր փշերով: Աշնանը ցողունները փայտանում են, իսկ հաջորդ տարվա գարնանը՝ ճյուղավորվում և կորցնում փշերը:



Տերևաթափ, մինչև 1,5-2 մ բարձրության հասնող թուփ (կամ կիսաթուփ) է: Տերևները կազմված են կենտ քանակության (3,5 կամ 7 հատ) անհավասար սղոցաեզր տերևներից, որոնք մուգ կանաչ են, սրածայր, ներքևից սպիտակ, թաղիքանման մազմուկաձևով: Պտղաբերող ընձյուղների վրա տերևները եռամաս են, և հենց այս տերևներից ստացած պատրաստուկներն են առավել օգտակար: Ծաղիկները սպիտակ են՝ մինչև 1 սմ տրամագծով, հավաքված ոչ մեծ վահանաձև հուրաններում՝ ցողունի և ճյուղերի գագաթներին:

Պտուղը հուլիս-օգոստոս ամիսներին հասունացող բազմակորիզակ է:

Ազնվամորին մեղրատու բույս է, ծաղկման շրջանը տևում է 15-18 օր: Ծաղիկները թեքված են դեպի ներքև, ինչի շնորհիվ մեղուն կարողանում է «աշխատել» նույնիսկ անձրևոտ եղանակին: Մեկ օրվա ընթացքում ուժեղ մեղվաընտանիքը կարող

է մթերել մինչև 3 կգ ծաղկահյութ և 200 գ ծաղկափոշի. 1 հա ազնվամորու հոծ թփուտների մեղրատվությունը հասնում է մինչև 215 կգ: Մեղրն ունի բաց սաթի գույն, հաճելի համ և բուրմունք: Բյուրեղանում է երկրորդ տարում՝ ստանալով կրեմագույն երանգ:





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ - Վայրի ազնվամորի



Ինչպես մշակովի, այնպես էլ վայրի ազնվամորին պատկանում է վարդագգիների ընտանիքին: Բույսն ունի բազմամյա արմատային համակարգ: Վայրի ազնվամորու ծաղկման ժամանակաշրջանը տևում է հունիսի սկզբից մինչև հուլիսի սկիզբ: Իսկ այ, պտուղները սկսում են հասնել հուլիսի կեսից և շարունակում են հասունանալ գրեթե ամբողջ օգոստոսին: Վայրի ազնվամորու պտուղներն ալ-կարմիր գույն ունեն և գնդաձև են, քաղցրահամ են և շատ հաճելի նուրբ մեղրի բույրով: Քանի որ այն մեղրատու բույս է, իսկ ծաղկման շրջանը տևում է 15-18 օր: Ծաղիկները թեքված են դեպի ներքև, ինչի շնորհիվ մեղուն կարողանում է «աշխատել» նույնիսկ անձրևոտ եղանակին: Մեկ օրվա ընթացքում ուժեղ մեղվաընտանիքը կարող է մթերել մինչև



3 կգ ծաղկահյութ և 200 գ ծաղկափռի. 1 հա ազնվամորու հոծ թփուտների մեղրատվությունը հասնում է մինչև 215 կգ: Մեղրն ունի բաց սաթի գույն, հաճելի համ և բուրմունք: Բյուրեղանում է երկրորդ տարում՝ ստանալով կրեմագույն երանգ: Վայրի ազնվամորին աճում է հիմնականում անտառային գոտիներում և այն ունի հարյուրից ավել տարբեր տեսակներ: Այս ազնվամորին շատ է տարբերվում այլ վայրի հատապտուղներից, քանի որ այն պարունակում է մինչև 18% չոր նյութեր: Այս ցուցանիշը շատ ավելի բարձր է, քան, օրինակ, հաղարջինը, հապալասինը կամ լոռամրգինը: Սերմերում կան սպիտակուցներ, ճարպեր, ֆիտոստերոլներ և

տարատեսակ օրգանական թթուներ(կիտրոնի, խնձորի, գինու, մրջնի, սալիցիլի, ֆլավոններ, դաբաղանյութ,): Շնորհիվ հատապտուղի միջի մեծ քանակությամբ սերմների առկայության, վայրի





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ

ազնվամորիններին պարունակում է բազմաթիվ մանրաթելեր: Բացի այդ, պտուղները հարուստ են վիտամին C- ով և B խմբի վիտամիններով: Հանքանյութերի մասին նշելով արժե առանձնացնել կալցիումը, կալիումը, ֆոսֆորը և երկաթը որոնք նույնպես վայրի ազնվամորու բաղադրիչ մաս են կազմում: Գրեթե նույնանման նյութեր են պարունակում ծաղիկները և տերևները: Սերմը պարունակում է մինչև 12 տոկոս ճարպային թթուներ և բետա-սիտոստերին:

- *Օգտակար հատկությունները* -

Դեռևս հին հույներն ու հռոմեացիներն անտառից հավաքած ազնվամորու պտուղներն օգտագործել են ոչ միայն ուտելու, այլև բուժական



նպատակներով: Հին Ռուսիայում օրգանիզմի առույգության համար առավելության ժամերին ըմպել են ազնվամորու և լոռամրգի պտուղներից պատրաստված խոշապ: Հայրենական ժողովրդական բժշկության մեջ վայրի ազնվամորու պտուղների թուրմը լայնորեն կիրառվում է գրիպի, մի շարք ցրտառական հիվանդությունների, քրոնիկական ռևմատիզմի ժամանակ: Այսպիսով, ազնվամորին ունի հակաբորբոքային, ջերմիջեցնող,

քրտնամուղ, ցավազրկող հատկություններ: Ուստի Այն կարող է փոխարինել ասպիրինին, հատկապես օգտակար է չորացրած ազնվամորին, այն պարունակում է 20 անգամ ավելի սալիցիլաթթու, քան թարմը: Իսկ, գիտական բժշկությունը խորհուրդ է տալիս ընդգրկել հատապտղի թարմ և չորացրած պտուղները կամ դրանցից ստացված մթերքը աղեստամոքսային





Վայրի Պտղատու Ծառեր և Թփուտներ

համակարգի հիվանդությունների դեպքում, քանի որ դրանք լավացնում են մարսողությունը, ունեն հակաբորբոքային, ցավազրկող հատկություններ, սրտխառնոցը կանխարգելող ազդեցություն: Հատապտղից ստացված հյութը խորհուրդ է տրվում օգտագործել շաքարային դիաբետի, հիպերտոնիայի, աթերոսկլերոզի դեպքում: Վերջին տարիներին կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ազնվամորին նպաստում է ինսուլինի գոյացմանը և յուրացմանը հյուսվածքներում: այն խորհուրդ է տրվում ընդգրկել ինֆարկտ և ինսուլտ տարած հիվանդների սննդակարգի մեջ քանի որ ամրացնում է արյունատար



անոթների պատերը: Ազնվամորին իջեցնում է արյան ճնշումը և խոլեստերինի մակարդակը արյան մեջ, բուժում և կանխարգելում է աթերոսկլերոզը: Հատապտղի հակասկլերոտիկ հատկությունը բնորոշվում է դրա մեջ պարունակվող սիտոստերինով, որը հակազդում է խոլեստերինի առաջացմանը, իսկ



հատապտուղների մեջ պարունակվող թաղանթանյութը հեռացնում է խոլեստերինը օրգանիզմից: Սակայն պետք է հաշվի առնել, որ նմանատիպ օգտակար հատկությունների հետ մեկտեղ այն հակացուցված է նեֆրիտի, հոդատապի, երիկամներում օքսալատային քարերի առկայության դեպքում:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):